

Հ. ԵՂԻԱ ՎՐԴ. ՓԵՋԻԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՅԻՇԱՏԱԿ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՅ

ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՅԻ

Շանթաճարիչ անակնկալ մը եղաւ Հայր Եղիայի վաղաժամ մահուան լուրը, ինծի համար: Ս. Ղազարի Մխարանութեան ընտրելագոյն անդամներէն մին էր, որուն վստահուած էր Վենետիկի Մխիթարեաններու Ընդհանուր Քարտուղարի բազմահոգ եւ պատասխանատու պաշտօնը՝ մօտաւորապէս երեսուն տարիէ ի վեր:

Որեւէ տեղ, որեւէ դասակարգէ քիչեր ճանչցած եմ որ իրեն նման բացարձակ նշանաւոր ունենան իրենց ազգին հանգէպ: Սրտաբաց ու անկեղծ, զրեթէ միամտութեան կը հասնէր՝ ինչ որ հայասիրական էր իր մէջ: Օ՛, անտարակոյս եղած են խեղճ հոգիներ՝ որոնք չարաչար կերպով օգտագործած են իր հայասիրութիւնը, իր բարեսիրութիւնը: Սակայն, ան տակէ բան մը չէ կորսնցուցած: Զինք օգտագործողներն են որ սքանչելի լոյսը Հայր Եղիային բարութեան, ազնուութեան, անկեղծութեան, հայասիրութեան՝ փոխած են ափ մը մոխրի հետ:

1929էն ի վեր անձամբ կը ճանչնայի զինք: Մեր բարեկամութիւնը իրեն հետ սերտ սրտակցութեամբ մը տարիններուն հետ աճեցաւ, հարստացնելով իմ հոգիս: Շատ ցաւեցայ, որ վերջին անգամ Հայաստան իր այցելութեան, չկրցայ այնպէս մը կարգադրել՝ որ իրարու հետ ըլլայինք մեր պաշտելի հայրենիքը միասին տեսնելու համար: Իր վերադարձէն ետք, երբ ես ալ վերադարձայ Վենետիկի ճամբով, հանդիպեցանք իրարու եւ փոխանակեցինք մեր հայրենի յիշատակներու յորդերը սրտազեղ խանդավառութեան՝ իրարու հետ:

Անբասիր եկեղեցական, անյողգող հայրենասէր, զուրկութեամբ բոլոր օգնութեան եւ օժանդակութեան կարօտ Հայր-

բու, մանաւանդ հայ ուսանողներու համար, որոնք ափ կ'առնէին վանքին դուռը, ստիպողական աջակցութեան համար: Բոլորի՛ն կը հաւատար, բոլորի՛ն կ'օգնէր, բոլորին համար կը վազէր բարեխօսելու, զործերնին հեշտացնելու, կարեքները բաւարարելու համար:

Զուարթախօս եւ զուարթարար, աշխատանքէ չքաշուող, սքանչելի օրինակ մըն էր բոլոր անոնց՝ որոնք այս կամ այն եկեղեցական սքեմը կը կրէին: Ինծի շատ ու շատ կը յիշեցնէր երկու ուրիշ անբասիր եկեղեցականներ, երկու ուրիշ ամենասիրելի վախճանած բարեկամներ, Երուսաղէմի ողբացեալ Մեսրոպ Պատրիարք Նշանեանը եւ անմոռանալի Զարեհ Կաթողիկոսը:

Հայր Եղիան, ովին եղաւ վանքին արուեստական ընդարձակման: Դժբախտաբար պիտի չտեսնէ իր եւ մեր ալ մեծ երազը՝ վանքը զարգարուած տեսնելու ընտիր նոր զրջողիներու Մատենադարանով մը: Եթէ ապրիմ այդ երջանիկ օրը տեսնելու համար, վստահ եմ որ անոր հոգին հոն պիտի ըլլայ՝ բոլորիս հետ, ժպտուն, խանդավառ, զուարթախօս, կենսունակ, բարութեամբ լեցուն իր կայծկրտուն աչքերով լուսաւորելով մեր տխրութիւնը, իր անսպասելի բաժանման առթիւ:

Իր անմոռանալի յիշատակը շատ ազազուն կ'ընէ տկար այս քանի մը խօսքերը: Կարելի չէ խօսքերով պատմել ու բացատրել, ցոյց տալ ու զգացնել Հայու այն մեծ հոգին՝ զոր այս մաքրակրօն Մխիթարեանը կը կրէր: Ես երբեք չեմ հանդիպած մէկու մը՝ որուն հանդէպ ան քննախնդիր եւ վրիժառու ըլլար: Իրաւ է, կը զայրանար, եթէ երբեք մէկը ջանար մեր ազգային նուիրականութիւն-

ները որեւէ կերպով անարգել, պղծել: Կը յիշեմ, նախքան Իսրայէլ Օրիի մասին իմ պատմա-քննական հատորիս վանքին տըպարանէն հրատարակուելը, ինծի կ'ըսէր անկեղծօրէն.

— «Յարութիւն, եթէ Օրիի մասին անիրաւ բան գրած ես, արգելք պիտի ըլլամ հրատարակութեան: Օրին այսքան ատեն է մեր ազգային հերոսներէն եղած է»:

Անտիպ զօրքը կարգալէ ետք՝ ստիպուած էր համաձայնիլ որ զօրքս հրատարակուի:

Ի՛նչ վէճեր ունեցած ենք...: Վանքը կը լեցուէր իր ու իմ բամբ ձայներով: Ո՛րքան նախանձախնդրութեամբ կը պնդէր որ վանքին զրջողիներուն թիւը 2200էն աւելի էր... եւ կը հասցնէր մինչեւ չորս հազարի...:

Եւ հիմա, ոչ եւս է այս պատուական հայորդին, այս սրբակրօն եկեղեցականը, այս եղբայրասէր միտքանը, այս բարեպետ ողորմասէրը: Ոչ միայն օժտեալ եւ վստակաւոր զրազէտ մը կը կորսնցնէ Հայութիւնը, այլեւ ընտիր հայրենասէր մը:

Այսպէս, կ'երկարի՛ շարքը այդ սրբազան կողիէն անդարձ մեկնող իմ թանկազին, իմ ամենասիրելի, յաւէտ ողբացեալ սրտակից բարեկամներուս. Հայր Վարդան Հացունին, Հայր Արսէն Ղազիկեանը, Հայր Սահակ Տէր-Մովսէսեանը... եւ հիմա Հայր Եղիա Փէչիկեանը:

Թող ներուր յանկերզը փոխելու Յիշատակ հայրենասիրաց՝ օրհնութեամբ եղիցի:

«Յառաջ»

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

* * *

ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿ

ԱՌ. Հ. ԵՂԻԱ Վ. ՓԵՋԻԿԵԱՆ

Սիրելի՛ Հայր,
Թոյլ տուր, որ անգամ մը եւս, վերջին անգամ մը եւս նամակ մը, քանի մը տող չըմա Քեզի:

Թերեւս խորհիս թէ՛ տախտակ կ'ընեմ, մահուանդ ճամարութեան հետ հաշտուելու համար: Արդէն միշտ կըրցած ես զիս հոգեբանել: Հաւատա՛, Հայր, մինչեւ հիմա, չուրջ տասը տարի է ահա, երբ զրուածիւնդ ստանայի կամ Քու մասին մտածէի, կ'երազէի թէ՛ Մուրաւ-Ռաֆայէլեանի կանաչ ածուներուն մէջ թեւ-թեւի տուած կը ճեմէինք եւ խորհրդածութիւններ կ'ընէինք բանաստեղծութեան շուրջ, կամ Մեծափայլի զրաւելիք բարձր դիրքի մասին:

Ինծի զրկած քու տասնեակ մը զրուածութիւններու մէջ ալ արդէն միշտ նոյն հարցերով կը զրաւեցնէիր միտքս ու միշտ կը ջանայիր հայ զիրին ի սպաս լարել ու ժերս:

Կը զրէիր, որ թեւ առի եւ հեռացայ քովէդ, բայց, քու խօսքը պատգամ էր ինծի համար, երբ ինծմէ կը խնդրէիր մեր սիրելի վարժարանի հաւատաւոր առաքեալը ըլլալ: Սէրդ՝ մարմաջ կը դառնար, երբ իմ հաշտութեամբ Պառնասի բարձունքներէն Մուսաները կ'ոգեկոչէիր, որպէսզի Մ. Պէչիկեանի, Թ. Թերեւեանի, Դանիէլ Վարդապետի, Ա. Սրապեանի մեր կրթարանին մէջ վառած ջահը առնեմ...

Բայց, զոյժ մը հեղեղային, կարծես թէ փոքուց այն կամարը, որ այնքան տարիներ վարժարանի պատերէն ներս ապրելու խորհանքը կու տար ինծի:

Գիտե՞ս, կարօտեա՛լ Հայր, թէ ուր հանդիպած էի քեզի առաջին անգամ ըլլալով... Տասը տարի առաջ՝ Սուրբ Ղազարի պարտէզին մէջ, ծաղիկներ տնկած պահուղ: Այո՛, իրեւ մշակ ճանչցայ քեզ եւ երբ տարի մը ետքը Մուրաւ-Ռաֆայէլեան եկար տեսուչի պաշտօնով, զուն շարունակեցիր քու մշակի սիրելի գործը:

Մեր ամէն մէկուն սրտին մէջ անկիւն մը դատար եւ հազար տքնաջան աշխատանքով հոն վարդ մը, յամբիկ մը, մեխակ մը, արեւածաղիկ մը տնկեցիր: Այդ է պատճառը, որ այսօր, բոլոր Քեզ ճանչցողները կը խոնարհին մահովդ ծանրացած երկնակամարին տակ:

Կ'ըսէիր հպարտօրէն, թէ հայրենի Կով-

կասի ծնունդը եւ։ Ու կը վարձանայի՝ թէ ի՞նչպէս կըրցած էիր ծննդավայրէդ հեռու՝ անաղարտ մնալ։ Ու կը խորհէի՝ թէ տալիս կա արդիւնքն էր խառնուածքիդ եւ Սուրբ Ղազարի հայաշունչ դաստիարակութեանդ։

Հայրենիքէդ խեղճ մօրդ «Նարեկ»ի մրմունջով միայն հեռանալէ աւելի քան կէս դար ետք հրաւիրուեցար Հայաստան, ուր հմտալից ու խանդակաթ ճառերովդ ցոյց տուիր տաղանդաւոր դաւակներ արտադրող երկրին մէկ թանկագին դաւակն ըլլալդ։ Ամառն էր 1962ի եւ Օշականի մէջ հանդէպ Ս. Մեսրոպի շիրմին վրայ ուխտեցիր եւ ուխտել տուիր միշտ պաշարել հայկական այրուբերի սիրոյն։ Յետոյ՝ համբուրներ քոյրդ, սիրելիներդ ու պաշտօնք մը հող առնելով վերադարձար Ս. Ղազար։ Այդ սուրբ հողէն ինծի ալ բաժին հանեցիր մեր վերջին հանդիպման օրը։

Հիմա ալ ի՞նչ գրեմ... Այո՛, այն՝ թէ ձմրան օր մը ճանչցայ Քեզ։ Դուն հող կը մշակէիր։ Տարիներ շարունակ, ո՛վ Հայր, իմ սրտիս հողն ալ մշակեցիր ու մեր վերջին բաժանումի պահուն՝ դարձեալ հողով էր որ ողջերթ ըսիր ինծի...։

Այժմ, քու խնամքներով ծագեալ սիրտէս փունջ մը վարդ կը քաղեմ ու կը զննեմ քու յաւիտենապէս հանգած սրտիդ վրայ, այն սրտին՝ որ մինչեւ վերջ բախեց ազգիդ ու հայրենիքիդ սիրով։

Քեզ միշտ սիրող եւ երախտագիտութեամբ յիշող սանդ՝

«Ազատ Օր»

ՅԱԿՈԲ ՃԵԼԱԼԵԱՆ

* * *

ՄԵՐ ՏԵՍՈՒՉՐ

Մահեր կան, որ անցեալի քաղցր յիշատակներ կը վերանորոգեն մեր հոգիներէն ներս։

Մահեր կան, որ հին յիշատակներով աղաղակուն մեր սրտերը կը խռովեն։

Մահեր կան դարձեալ որ անհուն վիշտ

ու ցաւ կը պատճառեն մեր զիւրազգած հոգիներուն։

Ահա այդպիսի մահերէն էր, մեր սիրելի տեսուչ Հօր՝ Հ. Եղիա Վրդ. Փէշիկեանի մահը, որ պատահեցաւ երկու ամիս առաջ, Փետրուար երկուքին, Լիտուի հիւանդանոցներէն մէկուն մէջ։

Մահ մը՝ որ ինչպէս բոլոր մեր սիրելիներուն մահերը, մեր հոգիները լեցուց անհուն ցաւով ու վշտով։ Գոյժ մը՝ զոր երբ կարդացինք, աղչահար մնացինք։ Միթէ կարելի՞ էր որ այդ պարթեւահասակ եւ համակ ոյժ ու կորով եկեղեցականը, այսպէս անսպասելիօրէն ինար մահուան անդուծ ճիրաններուն մէջ, երբ տակաւին, հակառակ իր յառաջացած տարիքին՝ երիտասարդ կը զգար ինքզինք եւ օրէ օր նոր ծրագրեր կը մշակէր, ապագային դանդաղ իրադրութիւն համար։ Սակայն, անխելճ մահը թոյլ չտուաւ որ այդ ծրագրերը իրականանան ու դայն խելց իր սիրելիներուն ձեռքէն, անհուն վիշտ ու ցաւ պատճառելով Վենետիկի Միաթարեան Միաբանութեան, ներկայիս աշխարհի չորս կողմը ցրուած իր բազմաթիւ աշակերտներուն ու բոլոր զինքը ճանչցողներուն։

Մենք բախտը ունեցանք, ասկէ տարիներ առաջ 1953ին աշակերտելու Հ. Եղիա Վրդ. Փէշիկեանին, Վենետիկի Մուրաթ-Ռափայէլեան վարժարանին մէջ։

Ինք ալ մեզի պէս, այդ տարին (1953ին) նոր էր եկած Մուրաթ-Ռափայէլեան վարժարանը ու ստանձնած տեսուչի պատասխանատու պաշտօնը։ Առաջին խել հանդիպումով, խոր ապաւորութիւն էր ձգած մեր պատանի հոգիին վրայ։ Եւ այդ առաջին ապաւորութիւնը, տարուէ տարի աւելի մեծցած էր ու մեր հոգիները աւելի մօտեցուցած իր հայրական դուրդուրալից մեծ հոգիին։ Վասնզի մենք իր մէջ տեսած էինք զօրովաղութ հայրը եւ անձնուէր դաստիարակը, որ իր ոյժերու ամբողջ զօրութեամբ, նուիրուած էր սերունդներ դաստիարակելու դժուարին՝ բայց սրբազան զորքին։

Մեր հայերէնի եւ զրականութեան ու-

սուցիչն էր։ Քանի՜, քանի անդամներ, վարժարանի զեղաւեսիլ պարտէզին մէջ, պարտած ենք միասին, կողք կողքի, մեր զրական, ազգային ու եկեղեցական հարցերու մասին զրուցելով ու երկար վիճաբանելով։

Հայր Եղիա վարդապետ հմուտ հայադէպ էր, որմէ կարելի էր միշտ օգտուել, ոչ միայն դասարանին մէջ, այլ նաեւ պարտէզին, տեսարանին մէջ եւ դուրսը, պըտոյտի ժամերուն, բաւական էր որ հետը խօսակցութեան բռնուէիր։

Հայազրիտական անհատնում դանձ մըն էր մեր սիրելի տեսուչ Հայրը, զիտութեան ազդիւր մըն էր, որ յազեցում կուտար մեր երիտասարդի հետաքրքրութեանց ու հարցումներուն, իր բացատրութիւններով եւ հմտալից պատասխաններով։

Բարի էր Հ. Փէշիկեան, հեղահամբոյր ու խոնարհ։

Իր զլխաւոր առաքելութիւնը սակայն, բարեկործութիւնն էր։ Կը սիրէր բարիք ընել ուրիշին, ով կ'ուզէ թող ըլլար ան, առանց դաւանանքի խորութեան եւ առանց նախասիրութեան։ Ներկայիս, հաւաքաւոր աշակերտներ իրեն կը պարտին իրենց համալսարանական կրթութիւնը եւ մասնագիտութիւնը։ Ինքն էր որ հոս ու հոն կը գլմէր, նամակներ կը գրէր ու նեւոր անհատներու ու կազմակերպութեանց, որպէսզի անոնց բարեբարութիւնը ապահովէր, յառաջագիւղ եւ ուսման փափաք ունեցող չքաւոր աշակերտներուն համար։ Եւ անվարան կրնանք ըսել թէ ընդհանրապէս միշտ կը յաջողէր։ Իսկ Հրաջողելու կամ մերժուելու պարագային, որ շատ քիչ անգամ կը պատահէր, երբեք չէր յուսահատեր։ Կը նստէր ու նամակներու նոր շարան մը կը գրէր աշխարհի չորս ծագերուն մէջ ապրող ունեւոր հայ անձնաւորութեանց։

Ահա այսպիսի աննկուն նկարագրի տէր մէկն էր հանդուցեալ վարդապետը, որ իր ամբողջ կեանքը նուիրած էր իր սիրելի ազգին, Միաբանութեան ու իր հարիւրաւոր աշակերտներուն։

Այսօրուան պէս կը յիշենք։

1958ի ամառն էր։ Վկայականներու բաշխումէն քանի մը ժամ առաջ, մեզ բոլոր տեսարան կանչեց, իր հայրական վերջին յորդորները տալու համար։ Յուզուած էր ու դժուարաւ կը խօսէր։ Յուզուած էինք նաեւ մենք։

Ըսաւ թէ, ինքն ալ մեզի պէս, շուտով պիտի մեկնէր վարժարանէն իր պաշտօնին ժամանակաշրջանը լրացած ըլլալուն պատճառաւ։ Պիտի քաջուէր իր սիրելի Ս. Ղազարի վանքը, այդ խաղաղ մենաստանին մէջ մշակութային ու վանքի աշխատանքներուն նուիրուելու համար։

Եւ այդպէս ալ եղաւ... Մենք ստացանք տարիներով մեր երազած վկայականը ու ինքն ալ քաջուեցաւ իր սիրած մենաստանը։

Տարիներ անցան ու մենք մեր հոգեկան կապը շարունակեցինք նամակներով։ Ուրախ էր ան, մեր ընդդրեալ ապարիզին համար։ Իր նամակներուն մէջ միշտ կը քաջալերէր մեզ ու խրատներ կու տար, բարեսիրտ հօր մը նման։

Եւ սակայն, անսպասելին չուշացաւ։ Յանկարծ դադրեցան նամակները, դադրեցան նաեւ հայրական յորդորները. հիւանդ էր, ծանր հիւանդ։ Ուղեցինք գրել իրեն, սրտապնդել, բայց, մեր ձեռքը առաջ չգնաց։ Եւ տխուր օր մըն ալ կարդացինք իր վաղաժամ կորուստը, որ խոր սուգի մատնեց մեր երիտասարդ հոգին։ Աչքերնիս յառած բօթին, մնացինք անշարժ։ Յետոյ, արցունքի երկու կաթիլներ սահեցան մեր աչքերէն, ու քարացած մնացին մեր աշտերուն վրայ...։

* * *

Սիրելի եւ թանկագին տեսուչ Հայր, քու հայրական ու դաստիարակի քաղցր յիշատակը միշտ վառ պիտի մնայ մեր երախտապարտ սրտերուն մէջ։ Նրբեք պիտի չմոռնանք քու բարի եւ հայրական սիրտը եւ լուսաւէտ հոգիդ։

Հանդիստ յոյնարեկ ոսկորներուդ։

«Ժամանակ»

Շ. ՄԱՐԳԱՐ

հոն ապրող իր հարազատները: Ի՞նչպէս տեսաւ իր ծննդավայրը՝ չեմ գիտեր: Մըտադիր էի այս անգամ ես ինքս հարցումներ տալու իրեն եւ վայելելու գրեթէ երախայական հրճուանքը իր ժպիտին:

Աւագ: Այլ պիտի չտեսնենք այս մէկն ալ: Մէկը անոնցմէ, որոնց պարզ ներկայութիւնն իսկ դարձնանային արշալոյսին նման կը փարատէ մութը հողիներուն եւ յուսալ կու տայ: Անբացատրելի, անմեկնելի յոյս մը, որ քաղցրութեամբ կը տալա՞ծուի մտքիդ բոլոր անկիւններուն ու տարօրէն յուզումնաբարձ քեզ կը մօտեցնէ մարդերուն՝ անոնց մէջ միայն բարին, ազնիւը, ճշմարիտը տեսնելու եւ դնահատելու իղձով:

Ի՞նչքան տխուր պիտի ըլլայ, ալ չտեսնել Հայր Փէշիկեանը՝ կեցած այնքան հը-

րապուրիչ քարափին Սուրբ Ղազարի, երբ վենետիկեան բերուղէ ջուրերու համայնապատկերի խորէն նրբազիւծ կոնտուրն խարսխէ դարաւոր սանդուղներուն կըզդիւն:

Պիտի ըլլա՞յ մէկը որ այնքան թեթեւօտն ու ժպտուն առաջնորդէ՝ գէպի թանդարանը, մատուռը, տղարանը, ՏԻՏԱՆներու շիրմին, նոճիներու ծառուղիին, երեկոյեան խորհուրդի յատուկ արիշապատ հանգստարանը քիսքին, ծաղկալորդ ածուները՝ ունենալով չբթուքին Ալիշանի «Հայրենի հովիտ»ին մեղեդին:...

Հանդի՛ստ յաւիտենական քեզի՝ Ազրիականի ալիքներուն մեղմ օրօրով: Թող Հայրենի զեփիւռը քու շիրմիդ ալ փափայ սիրակարօտ Հայրենիքիդ նորանոր յաջողութիւնները:

«Երիտասարդ Հայուհի»

ՍԵՋԱ

ՅԱԻԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՎԵՀԱՓԱՌԷՆ

Առ Արհ. Գերպոժ. Տ. Սրապիոն Արքայսկ. Ուլուիոնեան
Ընդհ. Աբբահայր Մխիթարեան Միաբանութեան - Վենետիկ

Անթիլիաս, 10 Փետր. 1964

Պատուարժան Միաբանութեանդ անդամներէն Հ. Եղիա Վրդ. Փէշիկեանի վախճանումը խոր վիշտով իմացանք:

Այս տխուր առիթով կը փութանք Ձեր Արհիպատուութեան եւ Միաբանութեանդ ներկայացնել Մեր եւ Մեր Միաբանութեան խորազգած ցաւակցութիւնները:

Կ'աղօթենք որ լուսոյ Արարիչը Տէր Յիսուս Քրիստոս երկնային լոյսերուն մէջ հանդէսնէ իր աղօթատէր ու արդիւնաշատ ծառային մարդուր հոգին եւ արդարներուն օթեւանին արժանացնէ զայն:

Ողջունիւ սիրոյ եւ օրհնութեամբ

Խ Ո Ր Է Ն Ա.

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

ՅԱԻԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Հ. ԵՂԻԱ Վ. ՓԵՉԻԿԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ

Ո Ւ Ղ Ղ Ո Ւ Ա Շ

ԱՌ ԱՐՀ. ԳԵՐՊՇ. ՍՐԱՊԻՈՆ ԱՐԳՊՍԿ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ

ԸՆԴՀ. ԱՐԲԱՀԱՅՐ ՄԵԽԻՍԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Roma, 3 febbraio 1964

Suffragata col Sacrificio Eucaristico anima eletta compianto carissimo Padre Elia, esprimo Vostra Eccellenza et religiosa Famiglia vive condoglianze per scomparsa questo degno figlio Venerabile Mechitar, benemerito studioso storia letteratura patria, generoso servitore nostro amato popolo, zelante apostolo Santa Chiesa.

Card. GR. P. AGAGIANIAN
Prefetto S. Congr. de Prop. Fide

Roma, 3 febbraio 1964

Addolorato scomparsa benemerito Padre Elia Pecikian, Segretario, porgo condoglianze personali et Sacra Congregazione assicurando cristiano suffragio.

Card. G. TESTA
Segr. S. Congr. per la Chiesa Orientale

Venezia, 4 febbraio 1964

Desidero partecipare gravissimo lutto, unito Vostra Eccellenza et diletta Famiglia Mechitarista et comunità Armena nella preghiera per anima elettissima Padre Elia, cui memoria rimarrà in benedizione per preclara sue virtù, di cui rifulse sua vita sacerdotale. Fraternalmente abbraccio

Card. G. URBANI
Patriarca di Venezia

Venezia, 4 febbraio 1964

Partecipo vivo dolore codesta Congregazione per morte Segretario P. Pecikian, assicurando suffragi anima eletta.

P. LUIGI PIETROGIOVANNA
Provinciale Frati Minori Veneti

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Venezia, 3 febbraio, 1964

Particolarmente addolorato scomparsa Re-

verendissimo Padre Pecikian, porgo Vostra Eccellenza et Padri tutti Congregazione Mechitarista Armena espressione mie commosse condoglianze.

Dott. MANFREDI DE BERNART
Prefetto di Venezia

Venezia, 6 febbraio 1964

Apprendendo la ferale notizia scomparsa benemerito Padre Elia Pecikian, che personalmente ho avuto modo di apprezzare, desidero porgere ai Confratelli tutti espressioni vivo cordoglio civica Amministrazione et mio personale.

Ing. GIOVANNI FAVARETTO FISCA
Sindaco di Venezia

Venezia, 4 febbraio 1964

Partecipo vivamente grave lutto perdita Padre Elia.

Dott. CARMELO MARZANO
Questore di Venezia

Venezia, 3 febbraio, 1964

Profondamente addolorato inaspettata scomparsa Padre Elia Pecikian, nobilissima eminente figura sacerdotale studioso et amico carissimo, partecipo commosso unanime cordoglio.

TOMMASO TETI
Comandante dei Vigili Urbani

Venezia, 4 febbraio 1964

Partecipo loro lutto, invio condoglianze. On.le VINCENZO GAGLIARDI

Venezia, 4 febbraio 1964

Nome personale ACNIL et mio porgo sentite condoglianze.

Direttore dell'ACNIL
COLASANTI